

ՀԱՆԴԵՍ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՈՒՂԵԻՌՈՒԹԻՒՆ Ի ՊՈՄՊԷՅ ՀՆԴԿԱՑ

(ՅԵՍ Հատ. ԽԳ, էջ 254)

Ի ԴԱՐՁԻՆ. Իմ զգացմունք. — Ճամբորդ ընկերք. — Հանդիպ Ստեփ. — Ատեն
բերակցողն երևոյր. — Ատեն քաղաք. — Հայախառ չրաբարբ. — Երբ
Անգղիացիք տիրեցին Ատենի. — Ի պարանոց Ստեփ. — Ի Բոդր Սայիտ. — Դեպ
յԱղկապանքիս:



որք չէ ճանապարհորդեալ ի Հրն-
գիկս չի կրնար երևակայել որչափ
քաղցրութիւն ունի այն երկիրն, և
որչափ խոր կ'արմատանայ մարդուն
սրտին մէջ անոր յիշատակը: Ախ-
մայն, երկիրքը, բնութիւնը, մարդ-
կութիւնը, ամենայն ինչ նոր է, ամենայն
ինչ յատուկ կնիք մ'ունի, և մասնաւոր
և ախորժեղի տպաւորութիւն մը կ'ազդէ
որտին ու մտաց վրայ: Անդադութիւնն
իսկ վրայ գալով ճանապարհորդը կը յա-
փըշտակուի, և գոգցես անցեալը մոռա-
իեալ ներկային միայն կ'ապրի: Ժամանա-
ցը անզգայապէս կ'անցնի. աւուրք, եօթ-
կիսիք, և ամիսը զիրար կը յաջորդեն, և
ննքը երջանիկ անփութութեան մը մէջ
կ'որորի:

Բայց և այնպէս Հուսկ ուրեմն կը լուսա-
նայ այն օրն երբ այս ամենայն նորութիւն,
ինչպէս ըսեմ, կ'ունականայ. այն առեւն
մարդուն սիրտը և միտքը յորորովին առ
իւր հայրենիս կը վերադառնայ. իւր եր-
կրին և իւր տան յիշատակը կ'արօտազին
կը դարձնուն, և այնուհետեւ ոչինչ ի ներ-
կայից, որչափ և քաղցր է նոր, կարող է
իւր սրտին կարօտը լցնել. յա մանաւանդ,
ըսեմ, ամենայն ինչ կարծես հասարակ ու
աւարակ կերպարանք մը կ'առնու, և պան-
դըխտութեան անմիթարութիւնը վրան
մանրանալով ինքզինքը քաղաքակաւու-
թեան կենաց կեդրոնէն շատ հեռացեալ
կը գտնէ, և օտար ու խորթ երկրի մը մէջ:
Չանձրոյթը ու լքումը սրտին կը տիրեն, և
այնուհետեւ ոչ այլ ինչ կ'անձկայ եթէ ոչ
գարձին ի հայրենիս: Եւ եթէ բռնադա-
տեալ ի գործոյ անկարանոյ ըստ իւր ըզ-

ծին փութապէս այն երկրէն հեռանալու,
այնուհետեւ տեղին իւր աչաց առջին աքսո-
րանաց վայր կ'ըլլայ:

Սապէս էին իմ զգացմունք յետ երկից
ամսոց որ ի Պոմպէ կը գտնուէի. և սա-
կայն ինձ բուռն էր երկարել կացս մինչև
Ապրիլի առաջին օրերը: Բայց և այն յե-
տին աւուրք ինձ ճամբարիտ քաւարան կը
թուէին, և սիրտս երկիւղիւ տոչորեալ կը
մարանէր որ չըլլայ թէ կացս երկարելով
ինձ անհնարին ըլլար փոթորկաց եղանա-
կէն յառաջ մեկնել այն երկրէն: Տխրու-
թեամբ զգածեալ ստեպ ծովեզր կ'ելլէի և
այս քաղաքի ծովուն վրայ ձգելով չէի
կրնար արցունք մը զսպել մտածելով այն
հազարաւոր մղոնք որ զիս հեռաւոր միայ-
նարանէս կ'անջատէին:

Երբ լուսացաւ այն օրն որ ամենայն ար-
գելք հարթեց և ինձ զիւր եղաւ մեկնելու,
ո՛հ, որչափ ուրախութիւն զգացի, որչափ
մխիթարութիւն, երբ Աւստրիոյ հրապար-
քին՝ աւետեց երկուց չոգենաւուց նոյն եօթ-
նեկին մէջ մի զմիոյ կնի մեկնելու: Իսկոյն
առաջինն ընտրեցի ընդդէմ իւր խորհրդին
որ կը խրատէր զիս երկրորդով մեկնելու,
ուրբաղով ընկերութիւն ըլլալու էր: Բայց
ինձ ախորժեղի ևս էր միայնութիւնը, և
լաւ ևս համարեցայ կանխել չորս օր քան
յապաղել այլ ևս այն երկիրը որոյ գե-
ղեցկութիւնն ալ սիրտս չէր հրապարե-
րայրան որքան հեռաւոր հայրենեաց ըլլա-
լի յիշատակը:

Եւ սակայն այժմ որ անգործարար հանգ-
չած եմ ի ծերացեալն Եւրոպ և անցեալը
կը խորհրդածեմ, եթէ արտա մէջ վառ իղձ
մի կայ տեղափոխութեան, է՛ թէ հնար էր՝

միւսանգամ դառնալ 'ի Հնդկիս որոյ յիշատակն անջնջնի է արտէս ու մտքէս : Այսպէս միանգամայն քաղցր ու դառն է այն երկիրն :

Արդ Ապրիլի երրորդ աւուր ցորեկը զիս շտապու ձգեց 'ի մակոյկ որ ինձ 'ի լոյտի շողենաւ պիտի առաջնորդէր . այնքան էր ուրախութիւնս և սրտիս այլայլութիւնը , որ ամենայն պատշաճութիւն մոռացեալ՝ Հազիւ 'ի բացուստ կարող եղաւ ողջունել այն սակից օրոց Հետ Հինգ ամիս կենակցած էի : Սիրտս կը տրոփէր քանի որ ցամառէն կը Հեռանայի և երկիրդիւ կը վարանէի չըլլայ թէ շողենաւ մեկնած զտնեմ : Ինչպէս քաղցրութիւն զգաց սիրտս երբ ոտս կոխեցի այն շարժական կամրջին վերայ որոյ միւս կողմը դէպ 'ի դէմ երթալու տեղիս կը Հայէր : Այնուհետև չունէի տարակոյս թէ արտորանաց Համարեալ վայրս ստուգապէս թողլու էի : Եւ սակայն աչքս այն քաղաքին վրայ գործնելով՝ կարծես անոր որմունք , անոր շէնքերը , անոր աշտապակները սպառնալից կ'ըսէին , թէ պիտի զար օր՝ օր ըզմամ պիտի անցած օրէն մէկը տեսնել , ըզմամ պիտի այն աւագուտին գետինը միւսանգամ կոխել , այլ պիտի չկարենամ , և միայն անցելոյն յիշատակը երբեմն երբեմն երազներս պիտի զուարթացնէ :

Շաքենային վրայ աթոռս կը զետեղեմ , կը բազմիմ և քաղաքին նայելով անՀամբերաբար կը սպասեմ ժամուն որ նաւուն խարխալը վեր առնուն : Ի բացուստ երկու մակոյկ դէպ 'ի մեզ կը մերձենան . ճանապարհորդակիցը են որ ինձ նման կը ըստպեն երկրէն Հեռանալու :

Արեւ կը խանարի . քաղաքին լապտերք մշուշին մէջէն կը սկսին փողփողել , և Հուսկ սերմն չլիջայից շնչիւնը խարխալին վեր առնուիլը կ'աւանտ : Շաքենաւը Հնգրիկ Հեղիկ իւր ընթացքը կ'առնու և իրջ մը ետքը այն մեծ քաղաքին միայն սև գիծը ետեւնիս կը թողունք : Ա՛ր և նոյն ատեն սպասաւարը զճանապարհորդակիցս ճաշի կը Հրաւիրէ :

Հոն դիւարս կը թուար . ծիրանի նաւապեալը , իւր երկրորդը , և այլ երկու տեղակալք նաւապետ . ես և չորս անգղիացի ճանապարհորդք : Ի գիւղութիւն մեզ՝ ողջոյն շողենաւ՝ Հանգիստ խղիկներով : Վրտերմութիւնը՝ որ ամենակարեւոր է ճանապարհորդութիւնը զրօսալի ընելու՝ շուտ մը կը մտնէ մէջերնիւ , և այնուհետև՝ ցորչափ ճամբան տե՛ն՝ ամենքս գողցես մէկ ընտաշնեաց ունձինք ըլլանք պիտի :

Մեր շողենաւը՝ 'ի խնայութիւն ծախսոց փխրո՞յ առ ժամն ութ մղոն կը քայէ . նաւապետին սցալախէ է պատուէր : Այլ թէպէտ ընթացքնիս ծանր՝ մեզ չէ փոյթ . ընթացքմամբ ու խօսակցութեամբ ժամանաւ կը կ'անցնի : Ողջ անգործ , ծովը խաղալ , ուստեք նեղութիւն չունիմք , և այդ շատ է :

Սնվործ և Հանգիստ՝ մետասաներորդ օրը կը լուսանայ , և մեր երեկոյեան դէմ ողիմք : Արաբոյ ծովեզրը տեսնել . չըման մի ևս և Առէնի նաւահանգիստը խարխալ կը ձգեմք :

Նաւին շրջապատին յեց՝ լուխ կը դիտեմք այն Հրաբխային երկրին կերպարանքը . ամայի , հրկիզեալ , անբրդի , անպտուղ բլր . բոց շղթայ մի է որ ծովափին վրայ կը ցըցուին : Բայց յանկարծ անսովոր աղաղակաց շլոթ մը զմեզ կը սթափէ . նաւակաց բաղմութիւն մը մեր նաւը պատած են . առնոց մէջէն տեղացի սեւամորթ Սոմալից խառնիճազանն մի ամեն դիէն մազլեղով նաւը կը լեցուին 'ի խնդր ճանապարհորդաց : Մեր նուազութիւնը տեսնելով յուսաբեկ կը մնան . բայց և այնպէս մեզ կը բռնորեն և գողցես կը ստիպեն ցամաքը առաջնորդելու : Աղտեղի Հանգե բժիշկ Հըրոնաք խառնիճազաննին միջէն ճամբայ կը բանան , և իրենց քրճոց բովանդակածը մեր առջև տարածելով՝ մեզ կը յորդորեն ալ և ալ մեծութեամբ աւգեղեցիկութեամբ ջայլամի փետուրներ ստանալու . աղակնիկութիւննին ունայն կ'իլլէ , և լքեալ կը մեկնին : Սեւամորթ Սոմալք իսկ անոնց կը Հետևին թողլով մեզ մեր անդորրութիւնը :

Կակայն սեւամորթ Սոմալ տղայոց խումբի մը մեր նուազութենէ չլքանելով՝ 'ի ստորեւ իրենց նաւակաց մէջ կանգուն կը դադարին . և ձեռով և բանիւ պաղատագին մեզ կը յորդորեն որ գոնեաւ փոքր գրաւ միկ մը ծովը նետենք : Եւ միք՝ Հանձնելով ձեռնոք գոհացնել՝ Հայցուածքնին կը կառարեմք և ամենափոքր գրամիկ մը ջուրը կը ձգեմք . խղից խմիւն մէջէն մին ջուրը կ'ընկղմ և քանի մը լուպէ յետոյ երեսը կ'ընկէ՝ գրամիկը ձեռքին մէջ լոռած ցուցընելով : Միոյն կը յաջորդէ ուրիշ մը . և այսպէս Հետգնտէ ամենը խրեանց մասը կ'առնեն , 'ի մեր զարմանս , որ կը զբօսնունք տեսնելով այն տղայոց ճուրադարձութիւնը , որ անմիջապէս կերպիւ ինչ և ինչ ոչինչ նիւթ ծովուն խորէն վեր կը բերեն :

զգոյշ լուգորդայ միծապէս վտանգաւոր . կ'ըսեն թէ չեն սակաւ այն դէպք որ ողջնայ տղայ մի կամ կիսով չափ մարդ մի այն հատուղի գաղանապ զոհ ըլլայ : Դուք կը տեսնուիին իսկ տղայք որոց մէկ սրունքը չանձառուկը տարած է :

Բոլոր այս Սոմալք, առհասարակ մեծ ու փոքր, բարեկազմ, աշխոյժ ու սրամիտ երեւոյթ մը ունին : Անանաւոր գիտելի բան իրենց ատամանց սփտակութիւնը և անաբատութիւնն է . մասնաւոր խնամք ունին զանոնք սպիտակ ու մաքուր պահելու, և այսու նպատակաւ ձեռքերնին միշտ զեղնորակ փայտ մը կը կրեն, որու միտաւք անոնք կու տան, որով և շարունակ կը չըսին :

Առէն՝ Երեսնիկն Արարիոյ ծայրը կը գտնուի, Ափրիկէի Ատէլ քաղաքին հանդէպ, Կարմիր ծովուն մոտե առջին ու Հնդկաստանի Ուվիստիսի վրայ : Թերակողքի մըն է, շրջապատեալ գոլով 'ի ծովէ, ու պարանոցով մը յարեալ ցամաքին : Առհասարակ կողմէն գիտելով Առէնի կերպարանքը՝ հրաբխային միջոցորդաց անմխիթար երեւոյթ մը ունի. ցած ու ծայրուտ բլրոց շրջայ մի է կարծես, սևատես, ամայի, արեւակէք, անբեր ամենին, որ նախկին հրաբխի մը հերձոտունն ու պատահողութեան ձեւացած են : Այն հիւրատես և չորուն վրայէն կարծես բնութիւնն իսկ կը խորշի . ոչ բուսականութիւն կը տեսնես, ոչ ծառ, ոչ թփիկ որ անոր վայրի կերպարանքը ամբէ : Նոյն իսկ շարժուն կենսոց կարծես անկէ տեղի կու տայ . զի և ոչ թռչնիկ մը կը տեսնես, 'ի բաց առեալ ծովային թռչուններն, որ այն կատարաց վրայէն սառառնելով անոնց տխուր կերպարանքը գուարթացնէ : Եւ Լեթէ շահատիրութիւնը չձգէր, անշուտ մարդս ալ իր անիծեալ երկրէ մը անկէ կը խուսէր¹ :

Վրդ այն տխուր ու վայրի տեսարանը քիչ մը զուարթացնողն է տանց շարք մը սպիտակ որմունքներով որ այն աւաղաւտ սև ծայրուտից ոտքը կը կանգնին, արաբացի ճարտարապետութեամբ ու վայելուչ

տեսքով : Ոմանք իբր պանդոկ կը ծառայեն, ուր կը բնակին եւրոպացի պաշտօնատեարք ու վաճառականք . այլք գործատուք են, կամ սրճաւոցք, և կամ խանութք շրէից ու Փարսից ձեռքը, ուր հնար է գտնել Ափրիկէի և Սիւրի ճարտարութեանց ամեն տեսակ հետաքրքրական առարկայ :

Այն Եւրոպացի ճանապարհորդք որ այլ և այլ տեղերէ գալով ասկէ կ'անցնին միւսանգամ Եւրոպա դառնալու, հոս հասնելով փոյթ կը տանին ոչ միայն բնտիր քաշէ գնելու, այլ նաև ջայլամի գեղեցիկ փետուրներ, Ափրիկէի զէնքեր, Մատակասկարի սփրիգներ, հալուէ, սատափ, գազանաց մորթեր, ինչպէս առեւծու, յովազի, անձառիւծի, և այլ տեսակ Ափրիկէի և Սիւրի ձեռագործներ :

Ես լեհացի հրէի մը խանութը մտնելով շատ մը տեսած գաղանաց մորթերէն՝ մեծահասակ առեւծի մը և գեղեցիկ յովազի մը մորթերն անարկան չհամարեցայ ստանալու 'ի յիշատակ :

Շոգենաւուց ու ճանապարհորդաց բազմութիւնը այս անմխիթար տեղին ալ կը ջանայ դրօսայի ընկու : Մասնաւոր սրճանոցք կան որ կը ծառայեն իբր ժողովարան ճանապարհորդաց, ուր զխաւորապէս գեթմանեցի երաժիշտ օրիորդաց ընկերութիւնք եւրոպական երաժշտութիւնը կը հնչեցնեն :

Սակայն բոլի Առէն քաղաքը տեսնելու համար այս նաւահանգստին ծովային վրերայ կենալու չէ, հարկ է դէպ 'ի ներս երթալ, որ հետի մէկ ու կէս ժամու ճամբայ է :

Անր շոգենաւը մէկ ու կէս օր այն նաւահանգիստը գաղաթեւու էր . այս ինձ պատեհ էր հետաքրքրութիւնս յազնցնելու : Առաւօտանց կանուխէն այն ծովեղեցիաց աւազուտին վրայէն քայլս դէպ 'ի հանդիպակաց բարձրաւանդակ մի կ'ուղղեմ, ուրոյ միւս կողմը գոգցես երեսուն հազար մարդոց քաղաք մը կ'աւետեն : Աջակողմս բլուր ճամբուն իրկայնութեամբ՝ սև, հրկիզեալ, առապար, ցամաքեալ հրաբուխային բլրոց կողմը կը կանգնին . ճախա-

է Այսպիսի և ահա այն ապուհորութիւնն որ այն երկրին վայրի երեսընը կ'ընէ առջին անգամուն ճանապարհորդին վրայ : Եւ սակայն բուսութեան կը անգնէ թէ այն անջրդի երկիրը ինչուուն տեսակ բոյս կը բուսանայ . թէպէտ մեծաւ մասամբ վառածարացեալ և ցամաքեալ, յորոց ևս վառածունը փրուտ են : Նոյն իսկ կէս գահաբառնութիւնը կ'ըսեն՝ իւր ներկայացուցիչն ունի . ինչպէս սակաւ թռչունք և սակաւ

միջատք : Տասնըջորսի չափ տեսակ թիթեւք կը գտնուին, կ'ըսեն, յորոց ոմանք գիշերային, և մարտի քաղաք իսկ մինչև արեւածիլը հողերը կը հասնին . Թող միջինը, կարիճը, ընտանի ճանձը և անհանգուրժելի մեծը :

Օձք և մուկէք իսկ կը գտնուին, ինչպէս նաև չափաք : Զորանիք, մուկն, և կապիւնց տեսակք :

կողմս ընդարձակ, վճիտ, մութ կապոյտ ծովը. զով Հոգմիկ մը ծովուն երեսէն շնչելով այն խզդուկ ջերմութիւնը կ'ամօքէ:

Ճամբան շարունակելով ստէպ ստէպ բնիկ սևամորթից խմբիկներու կը հանդիպիմ, որ գէպ 'ի Սիմօր փայն կը դիմեն, անշուշտ կամ 'ի խնդիր գործոյ ե կամ ինչ ե ինչէն հաշու: Այբ, կանայք ու տղայք խառն մէջերնին զուարթ խօսակցելով քովէս կ'անցնին, ինձ կը նային, կը ժպտին, մէջերնին խօսք մը կը նետեն ու կ'երթան:

Գողցես կէս ժամ քայլէն յետոյ անշան հիւղերու կոյտի մը կը մերձենամ: Մայա կոչուած փոքր գիւղական է աւազուտին վրայ շինած, ոչ շատ հեռի 'ի մաքսատանէն: Անկէ աւելի լքուցիչ տեսարան չի կրնար ըլլալ. այն խրճիթք տախտակներով յարդով ու տերեւներով լըջապատեալ միջոցներ են, որոց շինութեանը համար ամենեւին արհեստաւորի պէտք չէ եղած, ինչպէս նաև չկայ պէտք ոչ զրան ե ոչ պատուհանի: Եւ սակայն այս խրճիթք ամանք վերէն բաց բակ մըն ալ ունին, որմէ անդին է բուն բնակարանը: Անկէ քիչ մը անդին մաքսատան հանդէպ ու ծովափէն ոչ հեռի խարխիս կը ձգեն այն նաւք որ մերձակայ ծովնդերքներէն տեսակ տեսակ բերքի կը բերեն: Այլ ևս հետաքրքրութիւն մընալ ծովնդերիայ ճամբէն կը խոտորիմ եւ այն գիւղական կամ թէ լաւագոյն ըսեմ փլատակաց կոյտին գլխաւոր փողոցը կը մտնեմ: Տղայք ոմանք գողցես զարհուրած կը փախչին ե ներկայութեանս ապրկ կու տան: Խնկոյն ամեն խրճիթէն զլուխներ գուրս կ'երկընան. սիրտ ընողները գուրս կ'իլլեն, ե քանի որ ճամբաս յառաջ կը տանիմ, ետեւէն բազմութիւնը կը դիզուի, աղաղակները կը սաստկանան, որոց արձագանգ կ'ըլլան շանց հաջիւր: Մեծաւ մասամբ կանայք ու տղայք են. երեխ թէ արքա առհասարակ գործոյ գնացած են: Չկարենալով հասկնալ բազմութեան դիզուելուն նպատակը, թէպէտ սպառնական կերպաւորաբ մը չեն ցոյց տար, ըայց ե այնպէս քայլս կ'երազեմ, մինչև փողոցին միւս ծայրէն գուրս արձակը կ'իլլամ: Բազմութիւնը կը դադարի, այլ սևամորթ տղայոց խմբիկ մը գեռ եւ ետեւէս կու գայ, մինչև գիւղակէն բաւական կը հեռանամ:

Թէ որչափ սակաւապիտութեամբ ու խնդհաբար ապրելու է այն ռամիկը՝ Աստուած գիտէ. այն ապառաժ, անբեր երկրին վրայ, ուր ոչ ցօղ կ'իջնէ, ոչ կանաչ կը բուսնի, ոչ մշակութեան հետք կը տեսնուի, ե ամպը խիկ հազիւ երբեք կամ չորս տարի մէյմը իրենց ջուրը կը թափեն, ոչ

այլ ապրանաց միջոց կը մնայ անշուշտ, եթէ ոչ ձկնորսութեան վտիտ արդիւնքը:

Այն անդին ճամբան կը սկսի բարձրանալ ու ծովնդերքէն խոտորելով գէպ 'ի հարաւային արևելեան կողմը կ'ուղղի. անուշ դարուկներ մըն է որու շինութեանը մարդկային ճարտարութիւնն իսկ բաւական մաս մը ունի: Այս դարուկներս վերջապէս ժայռին ոտքը կը հասնի. նոյն այն կէտին վրայ ծայրը երկուքի բաժնած է արուեստաբար, ճամբայ բանալով ժայռից մէջէն միւս կողմը ինջնալու: Այս անցքը կրնայ զուրցուիլ Ատէնի դուռն կամ բանալին: Սոյն այս տեղս սիփայից զորանիստ մի կայ եւրոպացի յիսնապետի մը առաջ նորոգութեան յանձնուած: Հոն հրացանաւոր զինուոր մի այն հզօր բերդին թնդանութից առջևէն շարունակ վեր վար կը շրջի, Հարկ է ամեն ճանապարհորդ որ բերդին հանէն կ'անցնի՝ պահապանին հետազօտիչ հայեցուածքին քովէն քերէ, ե միւս զըռնէն ելլէ, ու ժայռից միջէն դարուկարին ճամբան առնու: — Այս բերդին ե անցքին դուռը անհրաժեշտ երեկոյեան ժամը իննին կը գոցուի:

Դռնէն անդին ճանապարհորդը երկու ժայռերի միջանոց կամրջէ մը կ'անցնի ե լերան խոր փորուած ճամբու մը մէջէն կը քայլէ, մինչև միւս ծայրը հասնելով աչացը առջին ընդարձակ դաշտավայր մը կը պարզի որ անհուն ամփիթէտորն մը կը նմանի, որ այլ ե այլ ձորերէ կը ձևանայ, ամեն նոյնպէս ամայի, նոյնպէս ցամաքեալ, անջրդի, աւազուտ, անբեր, անմիթար, հեռի 'ի ծովէ գոր ժայռից միւս կողմը թողի: Սակայն այն ընդարձակ դաշտավայրին կեդրոնը իր միթիթարիչ՝ Ատէն քաղաքին սպիտակատես շէնքերը կը կանգնեն 'ի հանդիպոյ, Հետզհետէ որ կը յստաջնմ բնկաց կրթեկը չորս գիւս կը քաղմանայ, ընդ որս եւս ե ուղտուց ե իւրց չարք:

Ճանապարհս յառաջ կը վարիմ ե հուսկ ուրեմն շինաց կը մերձենամ: յորոց ոմանք վարչութեան վերաբերելով վայելուչ եւրեղթ մը ունին: Քայլ մի եւս ե փողոց մի կը խոտորիմ: Սոմալ սևամորթ պատանի մի ինձ ընդառաջ կը փութայ ե խօսքն անգղիարէն ուղղելով ե հրաւիրէ քաղաքը շրջնցնելու: Ան 'ի չգոյէ լաւագոյնին կը հետեւիմ սրամիտ սևամորթին ե չուտ մը այն արարալէն քաղաքին փողոցները կը մուտքիմ: Տունը փոքր ե միաբարկ են, քարալէն ե հողալէն, այլ տանիք տափարակ: Այբ ե կանայք փողոցը տանց առջևը գիտիւր նստած կը խօսակցին. շատք անտար-

բերաբար նորեկին կը նային ու մէջընդին խօսք նետելով կը ժպտին: Թուի թէ վարժ են սպիտակամորթ տնաներու, անոր համար ալ հետաքրքրութիւն չեն ցուցներ: Նշաւին ձեռքը միտառք փայտը կայ, որով ակունին կը շփեն:

Վաճառանոցին հրապարակը կ'ենլում որ գրեթէ քաղաքին կեդրոնն է, այլ ամենևին անշուք. նմանապէս վաճառանոցին ներսը ամենեկին անպաճառ է. և բերոց սակաւութիւնը տեղւոյն ապքատութիւնը կարծես կ'ուզէ նշանակել: Բայց ամենէն աւելի աչքի գարնոցը ջրոյ պակասութիւնն է. հրապարակին մէջ ուղղակի և յաւանա կաց խումբեր տիկերով բեռնաւորած կը տեսնեմ, և հետաքրքրի հաղցման առաջ նորգա կը պատասխանէ, թէ առ հասարակ ջուրը հարկ է երկրին ներսերէն կեն. դանեաց կռնակը բեռնաւորեալ բերել, Թող որ քաղաքին կարևոր պաշարք իսկ ուղտոց կռնակը բեռնաւորած նմենէն կը բերորին:

Փողոցէ փողոց անցնելով վերջապէս քաղաքէն գուրս արձակը կ'ենլում. դէպ 'ի հիստիս հարաւային կողմը. հոն առաջին բանն որ տեսութեանս կը ներկայանայ է շատ մը թուփ որ մասնաւոր փայտեայ արկեղաց մէջ ամբողջած են: Այն վայրը մասնաւոր պարտիզի մը երեւոյթն ունի, առանձին երկաթեայ վանդակապատիւ շըրջապատեալ որոյ թիկունք Շէմ-Շէմ ժայռք անկրն մի կը ձևացրեն. այս ժայռք անկրնը քաղաքին հրաշալիք մըն է որու հարկ է ամենայն ճանապարհորդ այցելէ: Մեր ձեռնալով անոր մտիդ՝ անգլիարէն արձա նապարթիւն մի կ'ընթերնեմ, որոյ իմաստն է թէ լուստիւ արգելեալ է այն թփոց տերևներուն իսկ դպչելու:

Եւ շատ իմաստութեամբ դրուած է պատուելը, և մեծ զգուշութեամբ իսկ անոնց վրայ հսկողութիւն կ'ըլլուի. ապա թէ ոչ այն խառնիճազանք բազմութիւնն որ ջրոյ համար այն տեղ կը յաճախէ, անշուշտ մէկ ժամու միջոցի մէջ և ոչ տեղն մի կը թողուր այն նկնահասակ, ծիրեալ ու սակաւտեղութիւն վրայ. որ աւելի բուսականութեան վիժածք կրնան զուրցուիլ. և սակայն իրենց ներկայութիւնը այն ցամաքեալ, ապառաժ, հրկիզեալ տեղւոյն ժպիտ մը կը տպաւորեն:

Այս տեղին, այս պարտիզը, այս զբոսալի վայրն է Ստեն քաղաքին հրաշալիքը. հոն են այն հուշակաւոր մեծ ջրամբարք, որ մեծագործութեան յիշատակարան են: Սրովհետեւ հրաքղայային երկիրս է ամենեկին

անըրդի, ուր և երկնից օրհնութիւնն իսկ հաղիւ երբեք երբեք կամ չորս տարի մէկ մը և երբեմն իսկ հինգ կամ վեց տարի մէկմը այց կ'ենլէ, վարչութիւնը ժողովրդեան կարօտութիւնը խնամելով, այն ժայռից գողիկն ուստոս գուրբն ու խորշերն որմնապատ ըրած՝ մասնաւոր ընդարձակ ընդունարաններ շինած է, յորս կ'ամբարի այն սակաւադէպ անձրեաց ջուրը, որ ճամբարի օրհնութիւն մըն է բնիկ ժողովրդեան: Եւ սակայն այն եռամեայ կամ քառամեայ անձրեւ ստէպ հաղիւ մէկ կամ երկու ժամ կ'իջնէ, և այն իսկ ոչ այնքան առատութեամբ որ ջրամբարք լցուի. ստէպ ջուրը հաղիւ մէկ կամ երկու մեք կը բարձրանայ անոնց մէջ. որ ապա ջրօրթեան եղունակը յաղորդելով կը սպառի և ջրամբար կը ցամաքին: Բայց կ'ըլլայ նաև որ անձրեաց եղանակին կարծես երկնից սաշանք կը բացուին, տեսելով մէկ, և ևս երկու օր, և այն ատեն երկնից թափած ջրին չափը չկայ. ժայռի վրայէն հեղեղը կ'իջնան, ամին դին զնաք ու քարավազք ձևացրելով:

Այն առթիւ կրնայ զուրցուիլ թէ ողջոյն քաղաքը ջրատոյց կ'ըլլայ. որովհետեւ տունք մեծաւ մասամբ հողալէն են, և ծածքերն են տափարակ. անձրեւն ջուրը զիրաւ ամեն դիէն տունը կը թափանցէ ինչպէս թէ փողոցն ըլլար: Անկէ որմունք իրենց ամրութիւնը կորսնցրնելով, ստէպ ստէպ տխուր ու խորին աղմուկ մը կամ թնդին մը կը լսուի, որ ուրիշ բան չէ՝ բայց եթէ պատեր, տուններ կամ տանց մաս մը որ կը կործանին:

Այն ատեն բնկաց տաժանիլի և տաղնապի գործ կը բացուի. և ամենքն 'ի բռնադատութենէ ստիպելով հարկ է որ ծրուծեամբ վրութեան ծածկելու և ապահովցնելու իրենց փափուկ ապրանքն. որ են քաֆէ, այլ և այլ խէժք, խունկ, զմուռ, աետին, հալուէ, մեխակ, պղպեղ, համեմք, դեղորայք, հանեղէնք, և այլն: Սովորաբար բոլոր այս ապրանք բաց օդու մէջ կը պահուին, նաև ծովկեբքին մօտ, մինչև որ նաւերը բեռնաւորեն տանին:

Բայց երբ անձրեւ դադարի ամենքն իրենց տաղնապի կը մոռանան, և սրտերն են ուրախութեան կը բացուի. ամենուն բերանը իրենց ջրամբարն են: Առամանակեայ վրտերին մոռնալով ընթացքին դէպ 'ի այն բարիբար ընդունարաններն կ'առնեն, որոնք եթէ անձրեւ յորդ ինչած ըլլայ՝ մինչև բերանը կը լցուին: Այն ջուրը սկզբան պղտոր է, բայց կամաց կը զտուի կը մաքրուի: Ի տեսիլ այնքան լաւ և ա-

նայլ ջրոյ՝ ամենուն սիրուն ու երեսը կը գտարթա՞նայ . և շատ իրաւամբ, որովհետեւ շատ քիչ կը հանդիպի որ այնքան ջուր տեսնեն: Վարչութիւնը, որոս ստացուածք կը համարի, այն անհուն ջուրը անուրդի կը հանէ, որմէ մինչև հարիւր հազար ֆրանկը կը չափէ: Եւ այն ստակիր կ'անդունէ քաղաքին տեսչութեան, որ 'ի կիր կ'առնու 'ի շինութիւն հասարակաց շինից, հիւանդանոցաց, ճամբարներու, և ուրիշ քարեկարս քաղած գործոց:

Սակայն անպատեհութիւն մի ևս ունի այս ջուրս. որչափ զտուի՝ միշտ անախտժ համ' մը կ'ունենայ. մինչև ստարք լաւագոյն կը համարին գործընթիւ թորեալ ջուրը խմել քան զայս: Բայց ասկէ, ջրաժբարքս այս յոռութիւնն ալ ունին որ անհուն միջոց զանց բոցն կ'ըլլան. որոց եթէ տղզար անհանգուրժեկի է, որչափ ևս առաւել խայթը:

Սյս հոգակարոր ջրամբարաց կանգնումը ամենահինն է. ժողովրդական աւանգուութիւն մի կայ որ Սողոմոնէն կ'ընծայէ աւանց շինութիւնը: Անգղիացիք նոյն ջրամբարներն մեծ վարակաւութեամբ նորոգեցին: Թուով ինը հատ են, ծայրին գէտ 'ի վեր վրայէ վրայ յարմարցուած, ու բոլորը կաւով ձևիւած: Երբ վերինը անձրևի ջրով կը լցուի, ջուրը կը ղեղու ու վար հոսելով յամրոցը կը լեցնէ, և այսպէս հետզհետէ ամենը կը լցուի: Սյս կիրպով է որ այն ծայրերուն վրայ ինքնաձ ջրերը կը ժողովին: Ժայռին ամենէն խորը ղետեղեալ ջրամբարը գրեթէ երկու միլիոն հարիւրորդաւ լիցը կրնայ բովանդակել:

Սլապիսիք են ջրամբարքս անձրևէն յետոյ. սակայն ես անոնց ցամաքութեան ժամանակը դիպայ, ոմանց յատուկը մնացած սակաւ ջուրը կանաչ լոռ մը կտպած էր: Եւ սակայն այն սինլըր քաղմութիւնը տիկերը և տնօթները անխտիր տնկէ լեցրելով զուարթութեամբ կ'առնու որ անտէր: Եւ ինչ աշխատութեամբ հարկ է ժողովն այն ստիւալ ջուրը. մասնաւոր երկրթէ սանդուղք ձգած է վերէն 'ի վար շատ մեղր խորութեամբ. այն սանդուղքերուն վրայէն հարկ է բռնաւորած իջնեն ելլեն: Այն ամիսի միջոցին մէջ ջրկրայ աղաղակներուն արձագանգը ծայռէ 'ի ծայռ անդրադառնալով՝ կարծես մեծամեծ բռնակներու անցուդարձ կ'ըլլայ:

Շրջակայ ամայութենէն եւ ցամաքութենէն ետքը տեղիւ շատ զբօսայի կ'երևնայ, իւր պարսպալէն կամօր ղնիրով, սանդուղքներով, անձուկ ճախրաներով. որոց մէջ արուեստիւ շարեալ են այն հիւծեալ, վը-

տիտ տունկերն որ դժկամակու բունի կեսեր մը կը վարեն:

Այստեղիկ են Ստէն քաղաքին մի միայն հրաշալիք կամ մեծագործութիւնք. իսկ ընդհանուր քաղաքին վրայ տիրած բարեկարգութիւնէն կ'իմացուի որ քաղաքակիրթ ձեռք մըն է անոր վարչութիւնը վարողը:

Հետաքրքիր՝ գիտնալու ու տեսնելու Եւրոպացի գաղթականութիւնն յՍտէն, առաջնորդ պատանդէս կը հարցընեմ տեղեկանալ անոնց թիւը և բնակութեան վայրը: Բայց նա կամ միտս չի հասկնար և կամ չուզելով առաջնորդել կը պատճառէ թէ բաց 'ի գինուորականաց այլ Եւրոպացի չկայ:

Բայց որ ստոյգն է, 'ի բուն Ստէն չկան եթէ ոչ սակաւ Եւրոպացի վաճառականք, որոնք հրապարակին մօտ առ և արդ խոնութենք ունին: Ասոնցմէ 'ի գաւա կայ նաեւ վեղարաւոր Եղբորդ աւաքելութեան եկեղեցի մի հանդերձ անաստանիւ, և նոյն իսկ նորադանդք երեքն եկեղեցիք ունին:

Այլ 'ի թերակղզիս գտնուող եւրոպացաց մեծագոյն մասը կը բնակին 'ի Սիմբր փոյնդ, տեղւոյս ամենէն զով կողմն ըլլալով, Հոս է նաեւ կոտաւարքին բնակարանը, որ միշտ զօրավար մըն է, որովհետեւ Ստէն գինուորական նաւահանգիստ համարեալ է: Ստար տէրութեանց հիւպատոք իսկ Հոս կը բնակին, ինչպէս նաեւ այլ և այլ բնակութեանց գործակաւտարք. և Հոս կործմաւ կը գտնուին պանդոնք և հեռազրատունք, զօրանստին մաս մը, վեղարաւոր միանձանց մատուռ մի, Բարույ Հոս վտի Քերք փոքր վանատեղի մի, և նորադանդից եկեղեցի մի:

'ի բուն Ստէն քաղաք եթէ ճանապարհորդը քաղքին կկիրորնը կկցած, աչքերը գէտ 'ի վեր երկինքը վերցնէ, որ կողմէն ալ հայեացքը շրջեցընէ ու դիտէ այն չըրաւոր անմատչելի երկ ցած ծայրից քաղաքաները, ուրիշ չի տեսնիր եթէ ոչ բաղձաթիւ ընդդէր որ մէկմէկու հետ բոլորչի ճամբով մը շաղկապեալ են: Ժայռից մէջէն փորուած ճամբաներ կը տեսնէ, և կամօրքներ որ ծայռ ծայրի հետ կը կապեն: Եւ այն ծայրից արձորագունին վրայ, 1776 ոտք բարձր, հսկող պահուպան մը կանգուն կը տեսնուի, որ նման անգեղ հեռաւոր հորիզոնը կը հստատէ. միշտ կազմ միշտ պատրաստ տղըր տալու այն հարիւրաւոր թնդանթից, որ ծայրից գագաթանց վրայէն ողջոյն այն ծովուն կը տիրեն:

Աշխարհիս այս ամայի անկիւնը, որ մարդոս բնակութեան անպ

մենայն մասնաւորութիւնն ունի, 'ի սկզբաւնէ հետէ բաղմամբիւ զիզաց ասարեւելի եւ զամէն է, Հոս շատ մը ազգեր իրարու յաջորդած են, և դեռ եւս շատք այնք են որ ցայսօր հոն կը գտնուին: Արաբացիք, Սոմալք, Հապէշք, Վաւափհիք, Երբայցիք, Հնդկիք, Փարսիք և Հնդկա-թուրքիէք, առ հասարակ այս թերակղզոյն փայտ աստանաւած կը բնակին: Արաբացիք, Սոմալք և Հնդկաց միծաղոյն մասը մահմէտական կրօնքը կը պաշտեն:

Տեղւոյս վարչութիւնը Պոմպէյի նախագահութեան հնթախայ է. անկէ է որ կուգան պաշտօնատեսաւոր և զինուորք, ևս և ծախուց կարեւոր դրամք:

Անգղիական վարչութեան տրդինաւոր հետեւանքն այս եղաւ, որ Ալտէն միւսանգամ ստացաւ իւր վաճառականական էական դիրքն ու համարաւ. և որ լաւագոյն կարելի է համարել, վաճառականութեան կամ փոխառականութեան աւարակայք ինչ որ յառաջ էին գրեթէ նոյն մնացած են: Գաղթականք հոս բան մը չեն յառաջ բերեր. հոսպա իբր պարզ ամբարանոց մի փոճաւուց կը ծառայեցնին զԱլտէն: Հոս ամենայն ինչ վաճառք. ափ մի հող, զաւաթ մի ջուր, խոտոյ անրեւ մի. միով բանիւ ամենայն ինչ բայց 'ի արեւուն լուսնն ու ջերմութենէն, զոր բարբաղդաբար նախախաւանութիւնը վաճառականութեան ենթախայ բրած չէ:

Անգղիացիք 'ի 1830 տիւրեցին Ալտէն թեթակղզոյն. որովհետեւ անոր ծովափը անգղիական նաւ մը նաւաբեկէր էր զոր Արաբացիք աւարած էին: Անգղիական վարչութիւնը այս անիրաւութիւնը առիթ առնելով հատուցում պահանջած էր, և իւր բողոքը ունենցիր զգտնելով՝ գիտնէ զօրով գնատակածից ու տիրեց տեղւոյն: Լահանի սուլտանը՝ որու ստացուածք էր՝ ջանաց նորէն ձեռք բերել. բայց իւր ամենայն ջանքն ունայն էլլելով վերջապէս 1845ին խաղաղութիւն բրաւ, դաշնադրելով Անգղիացոց հետ բարեկամութիւնն ու վաճառականական յարաբերութիւն:

Երբ Անգղիացիք տիրեցին թերակղզոյն, Ալտէն քաղաքին բնակիչք 600 հոգւոյ չափ հազիւ կային, որոց 250 Հնդկոյ, 50 ալ Պանիան, Վաճառալահութիւնն իսկ՝ որով տեղին 'ի հնուց հետէ միշտ հաշակաւոր եղած էր՝ գրեթէ իսպառ ոչնչացած էր. որովհետեւ Տաճկաց ու Լուսիտանացոց պատերազմներովը անդին ոչ միայն աւերածով լցուած անընացած էր, այլ նաև կարեւորութիւնն իսկ ջնջուած էր: Բայց և այնպէս երկայն ջրմբդի մը աւերակք, մեծ ջրամ-

բարք, և Շէմ-Շէմի բարձունքը տանող տառուերիւ ոտք լայնութեամբ մեծ համբու մը մնացորդի, յայտնի կը վկայէին տեղւոյն անցեալ շքեղութիւնն ու կարեւորութիւնը, զոր հնար էր միւսանգամ վերանորոգել: Աւստի և Անգղիացոց ժողովեամբ ու գործունէութեամբ՝ Ալտէն հետզհետէ մեծցաւ, բազմացաւ ու զօրացաւ. այնպէս որ զարդիս Տրիտանական կայսրութեան ամենէն կարեւոր կայաններէն մէկն եղած է: Հոն, 'ի Սիմբրի բոյնդ նաւակայան՝ կը ժողովին այն ամենայն շոգենաւոր 'ի Հնդկիս, 'ի Ձինտտան, յԱւստրալիա, և յայլ տեղիս կ'ուղևորին: Իր զրիւրք և իր հզօր բերդերովը Կարմիր ծովուն մտքը կը տիրէ: Պահապան զօրքը 4000 հոգիէ կը բաղկանայ. իսկ բնիկ ժողովրդեան թիւք երեսուն հազարի կը հասնի:

ՅԱլտէն շոգենաւորս խորխոսն առնելով՝ 'ի Պապ-է-Մաննայէ, Արաւատաց դսեն, զմեզ 'ի Կարմիր ծովը կը մղէ: Գուցէ հասարակածին շրմաթեանց կիրթք՝ ոչ ևս կը զգամք այն խղիչ անհանդուրժելի ջրմուտիւնն որ Եւրոպէն գաղով այս ծովուս մէջ պգացի: Կա մանաւանդ աւելի զով կը գտնուի անոր փայլէն շնչած օդը: Ահայն շոգենաւորս ծանր ընթացքն է որ քիչ մը անհամբերութիւն կը զկենցնէ: Բայց հոսով ուրիմ տեսնորսով ճանապարհ հորդութիւնէ հոքը կը հասնին 'ի Սուէզ: Հոն ինձ կը հասնէր ծովագնացութեանս չափին լրումը, և հարկ էր ցամաքէն երկաթուղեւ յԱղեքսանդրիա իջնել: Սկսայն ընթանութեան ասկաւորութիւնը այնպիսի մտերմութիւն ձգած էր մեր և նուապետաց մէջ, որ շուգեցին թողուլ զիս մեկնելու: Այլ ստիպեցին Աուէզի պարանոցին մէջէն իջնել մինչև ցօրոք Սայիտ, ուստի ուղևորներ էր շոգենաւոր գէպ 'ի Թրինտա:

Ի Սուէզ օր մի դադարեցանք, մնալով կարգադիր պատուիրին որ մեզի ակնարկէ պարանոցին տնցըր անեկու ժամը: Յետ այն անշնչա ծովափը իջնելու 'ի խնդիր ժաւմովաճառութեան, երկկողման ժամը հրեղին կը մոտենէր այն նեղ անցքը, ուսկից յառաջուցեր էր քան զմեզ Գաղղիացի օդատրապմական շոգենաւ մի: ջրանցքին երկու ստեղծ անմիջեմբ աւազուեալ. միայն մէկ երկու աղբաւորն խրճիթք կը տեսնեմք, ուսկից ֆէլլաճ աղայք և աղկուիչ փութաւով շոգենաւորն ետեւէն կ'ընթանան պարելի պարելի կանչելով: Պտուղ, հաց, և գրած նաւէն ցամաքը կը նետու

րունակն ընթանալ նոյն ձայնը արտաբերելով:

Ջրանցքս կամ պարանոցս, որում 'ի բազմաց կ'անձկայի ակահատես ըլլալու, անձուկ է յոյժ, և հարկ է որ չոգենաւք մի զմիոյ կնի արգաւ քալեն. տեղ տեղ իսկ շատ է միջին գծէն մեղրիւ չափ խոտորիլ որ նաւը աւաղին մէջ խրի: Ուրիշ գգուշութիւն մին ալ կայ ընելիք, երկուստեք գոգցես շարժուն աւազուտք ըլլալով հարկ է որ չոգենաւք ծանր ծանր ընթանան, որպէս դի կարելի եղածին չափ երկու կողմէն աւազք անշարժ մնան և չսահին դէպ 'ի վար 'ի ջրանցքը, Գիշերը նմանապէս քալելը արգելալ է. որ կէտին վրայ օրը տարածամի հարկ է նաւը դադարի, պարանները երկընցնէ և ամուր մը ցամաքին վրայ պրկէ, որովհետեւ խաբիսիս ձգելը արգելալ է. արեւուն ծագելովը դարձնալ իւր ընթացքը յառաջ կը վարէ:

Սապէս է մեք այս կարգադրութեան ստիպելոցանք հետեւելու, յետ երկու ժամ քայիլէն: Օրը երեկոյացեալ էր և անապատի գիշերը մը իւր հովանին կամաց կամաց մեր վրայ կը տարածէր. տեքնակ անմարդի կէտի մը վրայ ինկած էինք, ու խորին լուսթիւն մի մեր չորս դին կը տիրէր. հետի որչափ աչք կը զօրէր աւազուտք էին մեր աջ դին, աւազուտք էին մեր ձախ դին: Առ 'ի չգոյէ զրադանաց կարթ ձգեցինք 'ի փորձ այն ջրանցքին ջրոց ուր կ'ըսեն թէ ձկանց առատութիւն կայ. և փորձը յաջողեց' հզօր կարթնադան նահապտակ մատչելով խոշոր ձուկ մի որ երկորոգ աւուր ճաշը յարգարեց: Գիշերը յառաջացիր էր և ես գեռ ևս նաւակամրջին վրայ բազմեալ լիբիոյ երկինքը աստղերը կը դիտէի և այն ընդարձակ աւազուտք որ միայն գազանաց ասպարէզ են: Ուրչափ կը փափաղէի տեսնել անապատին ամենի սուրճը որ սովալլուկ մեր ապաստանարանին մուտքը որոնէր. ուշադիր ունկն կը մատուցանէի այն խորին լուսթեանք մէջէն ու կ'երեւակայէի լսել անոր մռնչիւնը. սակայն ոչ առիւծ և ոչ այլ ամենի գազան մերձեցաւ անհանգիստ ընել մեր կայանքը: Իւ այսպէս անդորարար գիշերն անցաւ և լուսացաւ օրը յորում նաւուն պարանքն լուծուելով յառաջ վարեցինք մեր ընթացքը:

Կը փութայինք անհամբերաբար այն ամպութենէն ելլել, և անփորձ ջրանցքին պատահարաց' կը յուսայինք նոյն գիշերն 'ի Բորք: Սայիտ ժամանակ. սակայն փորձ նաւապետաց սիրտը ամեն քայլին կը տրուէր. արգեօք առաջիկայ ճամբան մինչև

ցվերջ ազատ սիւսի գտնէն: Իւ ահա յանակնկալ, յետ երկուց ժամուց ընթացքէն, զադարելու պատուէրը կը հասնէր ողջոյն գծին վրայ գտնուող չոգենաւուց: Գաղղիացի պատերազմական չոգենաւը մեր առջևէն լայն աւազանի մը մէջ կը դադարէր. անոր ձախ դին և գրեթէ կից մեք իսկ պարանակապ կանգ կ'առնէինք. և այլ չոգենաւք որ մեր ետեւէն կու գային ետեւէ ետեւ ջրանցքին վրայ անշարժ կը շարուէին:

Այս բռնի դադարին պատճառը անգղիական ռեւանուորեալ չոգենաւ մի էր որ ջրանցքին մէջ կողմը ցամաքին վրայ նստած անցքը կը խափանէր: Արդէն աշխատելու հետ էին որ ջրի վրայ քային. բայց այնպէս խրած էր աւազան մէջ որ ձգող չոգենաւուց ամենայն ճիգն ունայն կը հանէր. հարկ էր վերջին փորձն փորձել, որ էր անոր բեռը թեթեւցնել. և դժբաղդաբար այս գործն երկարատեւ ըլլալու էր: Բայց չկար այլ ճար եթէ ոչ համբերել. և ով սովոր էր համբերելու լուսթեամբ կը տանէր. բայց ծովագնացին անհամբերութիւնը որ իրենց ազատ ընթացքին մէջ խափան չէն սիրեր, օրհնութեանց նորակերպ պսակ մը կ'արտասանէր այն դժբաղդ չոգենաւին և անոր վարիչներուն 'ի պատիւ:

Օրը երեկոյացաւ և գիշերը միւսանգամ ծածկեց զմեզ, և անհամբերութիւնը սկսաւ սրսերնիս նեղել. կը յուսայինք երկորոգ օրը արձակման ազդը լսել. բայց առաւօտուն լքումը տիրեց մեզի երբ նաւապետը աղղեց թէ և ոչ նոյն օրը յառաջիւլ ոյս կար: Ի՛նչ բնելու էինք այն անքնակ անապատին մէջ և կիողդ արեգին տակ. որ կողմը դարձնէինք աչքերնիս՝ անսպառ աւազուտ մը կը տեսնէինք. աւազ նուր ու գեղնորակ որ թեթեւ հովիկ մը չոգենաւին վրայ կը թափէր: Ողջոյն մթնոլորտն իսկ կարծես այն նուրբ աւազով յագեալ էր, ջերմ գեղնորակ գոլորշի մը կը նմանէր որ հորիզոնին վրայէն բարձրանալով երկնից կապուտին ջրում գեղնագոյն կարծիս հրանգ մը կը տպաւորէր: Մեր նաւէն քիչ մը անգին աւազուտին վրայ տեղ տեղ փայտեայ խաչեր տնկուած էր, նաւն թէ այն աւազին տակ հնագուցելոյ ֆրիստոնէի մը մնացորդը կը հնագէշէինք: Ի հետուստ լիբիոյ լըրանց մութ մանուշակագոյն շղթայն այն ամպութեան տխրութիւնը կարծես քիչ մը կ'ամոքէր: Սակայն ճանհից բազմութիւնն անպատմելի էր. կարծես բռնաւոր Փարաւոնին պատուհասը գեռ ևս կը տէրէր:

Եթէ մխիթարանք մի կար մեզի այն վայրի տեղւոյն մէջ պատերազմական նաւուն

գինեուրական կրթութիւններն ու երաժշտութիւնն էին, որ օրը քանի մի անգամ մօր կենաց միակերպութիւնը կը կտորէին։ Մի անգամ ևս փորձեցինք ցամաքն իջնելու ու մերձակայ կայարանին պաշտօնարանը երթալու։ Անոր բոլորը փոքր պարտիզիկ մը ձեւացուցած էր, որու դուռը բաց գտնելով և անպահապան՝ համարձակեցանք մտնելու շուրջ գալու։ Ո՞նք որ 'ի հանգիպոյ կու գար քերեց քովերնէս խոժոռ հայեցուածքով։ Ուսանց ուշ գնելու շարունակեցինք յառաջիկ։ քայց սպառնալից ծայն մը սկանծա խաղկեց։

— Աֆիսդուս, կ'ըսէր յունարէն, նա՞ ֆանէ դա... դոս։

Այս բուսական կ'ըլլար ինձ հասկցնելու թէ արեւելից դռներն հասած էինք։ Ըզգաստ բնկերացս դառնալով փութացուցի տեղէն հեռանալու, ու միւս անգամ դարձանք 'ի շողեհնաւ։

Լուսացած հուսկ ուրեմն մեր բռնի կայարանները օրը, և ահա 'ի ցնծութիւն մեր ամենեցուն՝ եկաւ յառաջելու ազգը։ Խրած նաւը բռնապահեմ եղած՝ վերջապէս շարժեր էր՝ ետեւէն եկողներուն անցք բանալով։ Ուրախութեամբ պարանները լուծուեցան և ջրանցքին մէջէն սկսանք յառաջել։ մեր ետեւէն տասներմէկ շողեհնաւաց գրօյակը կը տեսնուէին, որոց մեծագոյն մասը Անգղիացի էին։ Այն ուղղագիծ ընթացքին երկու կողմէն միակերպ նոյն անջննայի աւազուտից ամայութիւնն էր։ Երբեմն երբեմն միայն, ցորչափ յառաջ կը մատչէինք, մէկ քանի ուղտ, մէկ քանի ֆէլլաւ կը տեսնէինք, որմէ կը գուռա կէնքը թէ մերձակայ բնակութեանց տեղի մի ըլլալու էր։ Քիչ մը անդին հեռուները լինելու ջրին քով տեսակ տեսակ թռչնոց և անհուն կուռկներու լեզգոններ։

Երեւակայութեամբ կը մտածենք թէ երկու աշխարհաց մէջէն կը քայլենք։ մեր աջ դին ունինք զՍիւսիս, մեր ձախ դին զՍիւրիկէ, որու անմահ բրգանց գազաթները կը գուշակենք 'ի հեռուստ։ Որչափ պատմական յիշատակօք սրտներնս կը բարբախէ։ Սակայն մեր անփորձ ընթացքը վերջապէս այն նեղ ջրանցքէն զմեզ արձակը կը հանէ 'ի Լեդի անուանեալ Լճերը։ Ընդարձակ ծովակը են գոգցես, ուր թողլ է ամենեցուն ընթացքը երազելու։ Շոգոյ ուժը կը սաստա կենայ, ընթացքը կ'երազէ և ամէնը կը ճգնեն յառաջագէժ նահատակ առաջին հասնիլ միւս ջրանցքին մտից առջև։ Գաղղիական շողեհնաւը՝ քան զմեզ ծանրաբայլ՝ միշտ մեր ընթացքը կը խափանէ, մինչև առաջին ինքը լինը կտրելով ջրանքը կը

մտնէ և մենք կը հետևինք իրեն։

Ընթացքնս դարձնալ աւազուտից մէջէն կը շարունակի մինչև կ'ելլենք միւսանալով արձակը 'ի լիճն Դիմասէ, Մեր ձախակողմը, գոգցես իբր օվաթիս յանապատի, կը ներկայանայ իսմայիլիա 'ի հեռուստ։ անոր շրոք կողմը և 'ի հեռուստ որչափ աչք կը զօրէ՛ անհուն աւազոց և աւազուտ բլրոց ասպարէզ։ Այլ մեզ հարկ է այս լճիս մէջ առ վայր մի դադարիլ, մինչև 'ի հանգիպոյ ջրանցքին մէջէն եկող շողեհնաւը արձակը ելնէ և անցքը ազատ թողուն։

Հուսկ ուրեմն ժամը կը հասնի և մենք կը մտնեմք ջրանցքին վերջին մասը որ զմեզ 'ի Բորդ Սայիտ պիտի հանէ։ Տեղացի նաւակը պտուղներով բեռնաւորեալ կը մեր ձեռնանշոգեհնաւին։ Ֆէլլաւք մազլցնելով վեր կը դիմեն ընտիր նարինջներ մատուցանելով, որ յոյժ 'ի գէպ կու գան իրենք քաղցրութեամբ մեր ջերմին տապը զովացնելու։ Կաւապետք մատանել ընելով անընշան Քանդարան՝ մեզի կը ցուցնեն։ սակայն մեր կրծոց մէջէն ցնծութեան ձայն մը կը փրթի երբ երեկոյեան գէժ Բորդ Սայիտի հանդէպ խաբիսի կը ձգնա։

Հոս հարկ էր ինձ հրաժարիլ ընկերութենէն ու շողեհնաւը թողլով, այլով միջոցաւ գնալ յԱղբքսանդիա։

Բորդ Սայիտ անկան տեղի մի է. սակայն քիչ ժամանակի մէջ ըրած յառաջագիմութենէն գուշակել կու տայ իւր ապաւզայ յաղկութիւնը։ Ֆէլլահներու քաղաքը, որ ծովափէն մոզին էր չափ հեռի է, հնացեալ հողաշէն ու փայտաշէն տուններու կոյտ մըն է։ Փողոցները ազտեղի, գարշաւոտ ջրերը անոնց մէջ տեղը լճացած։ Թափառական լանց բազմութիւնը ամեն դին՝ ճանճերու լեզգոնները անապատմելի։ Սակայն բուն ծովափին մօտ նոր քաղաք մի կը սկսի կանգնիլ, որ Թուրի թէ մեծաւ մասամբ Յունաց ձեռքն է։ Հետզհետէ հաւանական է որ վաճառականութեան կեդրոն մը ըլլայ, որովհետև առ հասարակ ամեն աղղի վաճառականական շողեհնաւուց ժամատեղի է։ Գլխաւոր փողոցք փոքր վաճառականութեան խանութներու շարք են, ուր արևելեան քաղաքաց ամեն տեսակ ճարտարութեան նիւթեր կը գանուին։ Ժողովրդեան ու խանութպանաց մեծագոյն մասը Յոյն կը թուի։ Սրճանոցաց բազմութիւն մը ամեն դին ցրուած է, անոր համար ալ անկարգութիւնք անապաւս են, կ'ըսեն։ Ընդհանրապէս կը զուրցուի որ մեծ զգուշութիւն պէտք է քաղաքս բնա-

կելու, որովհետեւ շատ սրիկոյք, գողք, մարդասպանք և կախաղանէ փախչողք հոս կ'ապաւինին:

Քաղաքէս գաղափար մը ունենալու կէս ժամ իսկ շատ է. ես ի բռնադատութենէ ստիպեալ գիշեր մը անցուցի, ու երկրորդ օրը առսական շողենաւով մը գէպ 'ի յԱղքասանդրիս ուղեորեցայ:

Ի Բորդ Սայրիսէ ց'Աղքասանդրիս ութն տասն ժամս ճամպայարէ է և Ծովը ան գորր, գիշերը պարզ, շատ գրօսայի էր այն ծովափանց հեռուն քերել: Սակայն նաւերնիս խառնիճաղանձով հոծ էր. ութ հաւրիւր սինչբոր աւաիկ Թուս ուխտաւորք ժեզի ուղեկից էին գէպ մարդագումմ գիւնլով: Նաւուն մեծագոյն մասը գրաւած էր թաւեկը անհնարին կ'ընէին, և իրենց աղաղակաւ ու շփոթիւր թշուր վայրը կը լեցընէին:

Սաւաթը լուսացաւ և արեգը Հորիզոնը պատռելով իւր ոսկեփայլ ճառագայթները սփռեց ընդհանուր: Միշերկրականին երեսը, որու հեղատեսիլ ջրերը աւելելով ետեւնիս կը ձգէինք: Միջօրէին մերձ Աղքասանդրիս ազուտից միտունը սկսան առջեւնիս նկարել: Ի հեռուստ այն ծովափը ամալի, անկենդան և մարգկային ճգաւքններէ լքեալ կը թափն, սակայն անոնց տխուր ամայութեան երևոյթը ցիրուցան երկայնարուն արմաւենեաց ցանցառանցք գաղթները կ'ամսրեն: Այն ամանց գորշաւ գոյն կարմրադուր ասագուտից փայլէն, ուր գոգցիս յարատեւ հրակեղ արեւը ամեն րոյս ապկանութեան կանաչութիւնը կը սպառէ և ասպիս անդին չէնք մը, աղտարակ մը, բերդի մը սպիտակ որմունք, և շատ մը հողմաղացք կը կանգնին, կարծես անհետացած մարդկութեան մը շիրիմք են կամ լռեքեալ մնացորդք: Այլ դիս փոխարքայի մը կիսաւեր արքունիքը ինձ մատնանել կ'ընեն, անհետացած փառաւորութեան մը լքեալ մնացորդն է, հողմոց և օդոց անբարեխառնութեանց ձեռքը մատնուած մինչև չմնայ քար քարի վրայ որ չբայքայի:

Հնազանդէս արդէպ 'ի նաւահանգիստ կը յառաջնեք: Հեռուս քաղաքին չէնքերը կը մերձենան, ծովուն վրայ կենսական շարժ-

ման մը նշանները կը սկսին տեսնուիլ, նաւաւց բազմաթիւ կայմք իբր խոռոնախոյրք Հորիզոնին միջոցը կը պատեն, շողենաւուց ծուխը երկինքը կը մթնցնէ, և բազմաթիւ մակույկը ջրին երեսը ամենայն ուղղուածեամբ կոհակարեկ կ'ընեն:

Շոգենաւին կամրջին վրայ նաւուղիղը ուշագիր իւր հրամանները կը կրկնապատկէ, նաւը ծանր ծանր կը յառաջէ մինչև հեռակ ուրեմն իւր անծարկելով խորիւսը կ'արձրէի, մեր դիտեալ նպատակին հասած էինք:

Այլ ինչպէս կարելի է բացատրել այն փարիզոնի խառնակութիւնն որ անմիջապէս միջոցը ստանց: Արտաքուստ 'ի ստորեւ բազմաթիւ խնդրակը որպէս թէ յարձակ մամբ նաւն օտին: Ի ներքուստ ութ հաւրիւր խառնիճաղանձ անխորթք մտից աւ և լից միջոցները գրաւեցին. ահաւոր աղաղակաց խառնածայնութիւնը մինչև երկինքը կը տարձրանար. ձեռք, ոտք, բերանը, ամենայն ինչ շարժման մէջ էին, ոչ նաւէն վար նաւակներն իջնալ հնար էր, օչ զրաւն ներս մանել կարելի էր:

Դուրսեալ, տարտամ, կանգուն, նաւուն կողին յեց' այն բազմաթիւ նաւակաց մէջէն անհամբերաբար բարեկամաց ներկայութիւնը կը լրտեսեմ. այլ որ կողմն աչքս դարձընեմ անհնարին է այն խառնակութեան մէջէն բան մը որդուլ: Եւ ինչպէս կարելի էր ուսմը այն մտից առջևը խաղցնալ բազմութիւնը ճեղքել և ծնրա գալ:

Ինչպէս արեւու ճառագայթ մը որ յանկարծ ճեղքի մը միջէն մուտք գտնելով սենեկին խաւարը կը փարատէ, սապէս և ես տարտամութենէս սթափեցայ պիտոտրու կանի մը ճերկակտութիւնը տեսնելով որ այն խառնիճաղանձ բազմութիւնը կը ճեղքէր ու ետեւէն երողներուն ճառքայ կը բանար: Բէլեղեան Կարապետ և Արթին Պէյրին էին, Աղքասանդրիոյ համազգային Ատինին զատարարք, որ այլ ենթակալ պաշտօնէիք աւ բարեկամք կու զային զիս իրենց տունը սապնջական տանելու: Զուարթութեան լոյս մը ծաթեց տրտիս վրայ: Վեցամանց պանդխտութեան միայնութիւնս կը մերկանար, և այնուհետեւ մտերիմ սիրելեաց մէջ կը գտնուէի, 'ի դիւրութիւն և 'ի հանգիստ:

Կը շարունակուի

Հ. ՅԱՊՈՒԲՈՍ Մ. ԽՈԱԿՐՏՆԵՍ